ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Թեմա՝ «Բայի ուսուցման տեխնոլոգիան միջին դպրոցում»

Կատարող՝ 132 հիմնական դպրոց, Սուսաննա Լիոների Սահակյան
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ Աշոտ Գալստյան, բ.գ.դ., պրոֆեսոր
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1 «Բայի ուսուցման տեխնոլոգիան միջին դպրոցում»

1.1Ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ու մոտեցումների դերը՝ հայոց լեզվի դասավանդման գործընթացում.....5

1.2 Բայի ուսուցման արդյունավետ մեթոդներն ու տեխնոլոգիաները միջին դպրոցում.....11

Եզրակացություններ.....15

Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տվեք երեխային հետաքրքրասիրություն:
Գիտելիքը նա կգտնի ինքը»

Անատոլի Գին

Ինչպես գիտենք, արդի կրթական չափորոշիչները սահմանում է նոր կարողունակությունների համակարգ թե' սովորողների, թե' դասավանդողների համար: Նորագույն կրթական տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Բարփոխումների ֆոնին՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները: Անհերքելի փաստ է, որ լեզուների ուսումնասիրությունն ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը: Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ՝ հիմք հանդիսանալով մյուս ուսումնական առարկաների ուսումնասիրության համար: Ակնհայտ է, որ հայոց լեզվի առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքին հասնելու գործընթացը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և' սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և' ուսուցչի մասնագիտական որակները: Հայոց լեզվի դասավանդման շրջանակներում հույժ կարևոր է թե' գրավոր, թե' բանավոր խոսքը, որոնք փոխլրացնում են միմյանց:

Վերը նշած համագործակցության կայացման և ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը: Ավանդական մոդելով պլանավորված դասն այլևս չի կարողանում բավարարել նոր մտածողություն ու կրթական կարիքներ ունեցող սովորողների կրթական պահանջմունքները, ուստի հարկավոր է մեծապես վերանայել դասի պլանավորման

գործընթացը: Մեր մանկավարժական գործունեության փորձին հղում անելով՝ կարող ենք փաստել, որ ինտերակտիվ տեխնոլոգիաների ներդրումը , ՏՀՏ բաղադրիչի կիրառումը դասի ժամանակ ավելի արդյունավետ ու արգասաբեր կարող են դարձնել բուն ուսուցման գործընթացը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հաետաքրքրությունները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի կողմից ճիշտ պլանավորված դասի դերը «հակոց լեզու» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում սովորողների իմացական ու գործնական կարողությունները զարգացնելու առումով:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների գիտելիքների ձեռքբերման ու ամրակայման, համագործակցային, նախաձեռնողական ստեղծագործական և այլ կարողությունների զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ հայոց լեզվի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:

Հետազոտություն խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել հայոց լեզվի դասի շրջանակներում բայի ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացման եղանակները:

ԳԼՈՒԽ 1 «ԲԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ»

1.1 Ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ու մոտեցումների դերը՝ հայոց լեզվի դասավանդման գործընթացում

Արդեն իսկ իրողություն է, որ դասավանդման նորագույն տեխնոլոգիաների, մեթոդական հնարների կիրառումը ուսուցչին թույլ է տալիս կառավարելի դարձնել դասարանն ու ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը դասին: Նմանօրինակ հնարների ու տեխնոլոգիաների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու, ինքնուրույն գերծելու, կարծիք ու տեսակետ հայտնելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ, ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ժամանակակից ուսուցման ձևերի շարքում կառանձնացնենք ինտերակտիվ ուսուցման տեխնոլոգիաները:

Առհասարակ ցանկացած ինտերակտիվ հնարի կիրառման ժամանակ սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով՝ մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները: Այս տեխնոլոգիաներն իրենցից ենթադրում են սովորողների միջև փոխգործակցային մոտեցումների ապահովում դասի ժամանակ:

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «interփոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա

երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն դասավանդողի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը[1]:

Դասին կիրառվող տարատեսակ փոխգործուն մեթոդների առկայությունը սովորողին օժտում է հետևյալ հմտություններով՝

- Ինքնուրույնություն, կոլեկտիվ աշխատանքում սեփական ներուժը կիրառելու կարողություն,
- մեդիահմտությունների զարգացում, հետազոտելու, համացանցում որոնելու հմտություններ,
- թվային միջոցները գործածելու հմտություններ, տեխնոլոգիական հմտությունների զարգացում;
- անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում, հաղորդակցական կարողությունների զարգացում:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: Կարծում ենք՝ կրթության ոլորտում առկա խնդիրների հաղթահարումը մեծապես կախված է նաև այն հանգամանքից, որ սովորողի ու ուսուցչի միջև գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք: Մանկավարժական այս մոտեցումը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնողականություն: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[2]: Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային

[1] http://armedin.am/wp-content/uploads/2019/09 «Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ», էջ 3:
[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 10:

որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ ՀՀ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, քաջատեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ»[3]: Անշուշտ, ուսուցիչն է դասի ղեկավարը, նրա դերն առանցքային է սովորողների կրթության ու դաստիարակության հարցում, այնուամենայնիվ արդի կրթական համակարգում խրախուսվում է հատկապես աշակերտակենտրոն ուսուցման մոդելը, որտեղ սովորողը կարող է դուրս գալ լսողի պասիվ դերից՝ դառնալով դասի ընթացքի անմիջական ճարտարապետը:

Լեզուն մտածողության միջոց է. հայոց լեզու ուսումնասիրելու ընթացքում պիտի զարգանան սովորողի քննադատաբար և պատկերավոր մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, անհանգստությունները ձևակերպելու և վերարտադրելու կարողությունը; Այսինքն՝ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է[4]:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Շատ կարևոր է հայոց լեզվի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, չլինի պասիվ, այլ հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն

[3] Նույն տեղում՝ հոդված 27, կետ 5:
[4] https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf «Հայոց լեզու» ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար:

ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն: Անշուշտ, կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք:

Միջին դպրոցում սովորողների ստացած գիտելիքները համակարգված կերպով ընդլայնում են հայոց լեզվի տարբեր բաժիններից տարրական դասարաններում սովորողների ձեռք բերած պատկերացումները: Ուստի ծավալային ու բովանդակության խորքայնության առումով դրանք գերազանցում են ուսուցման նախորդ օղակում ստացած գիտելիքներին: Այս ամենով պայմանավորված՝ կարևոր ենք համարում, որ յուրաքանչյուր ուսուցանվող թեմա լինի համակողմանի ու խորը ուսումնասիրված, չկրի մեխանիկական վերարտադրման բնույթ, կապակցվի գործնական հմտությունների հետ: 7-12 դասարանների հայոց լեզվի ուսումնառության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

- Հաղորդակցում՝ բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում:
- Լեզվական համակարգ՝ հայերենի հնչյունական, բառակազմական, քերականական համակարգեր:
- Ստեղծարարություն՝ տեքստի փոփոխում և ստեղծում, նախագիծ Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում[5]:

Խոսելով հայոց լեզվի դասին սովորողների համաչափ ներգրավվածության, իմացական ու գործնական կարողությունների անցնցում զարգացման մասին՝ կրկին պետք է անդրադառնանք դասիպլանավորմանն ու նախագծմանը: Այս համատեքստում կիրառվող ինտերակտիվ մեթոդական հնարներից մայրենիի դասին կարելի է կիրառել.

- ✓ ԳՈՒՍ
- ✓ Տ-աձև աղյուսակ
- ✓ Մ-աձև աղյուսակ
- ✓ Շրջագայություն անցած թեմաների էջերով
- ✓ Ձնագնդի

[5] Նույն տեղում:

- ✓ Խճանկար
- ✓ Մտագրոհ
- ✓ Վեննի դիագրամ
- ✓ Դասի զեկուցող
- ✓ Սատանի հնար

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու, խոսքը հղկելու, բառային պաշարը հարստացնելու և ի վերջո բուն իմացական գործընթացն ավելի նպատակային կառուցելու լայն հնարավորություններ: 7-րդ դասարանում՝ ձևաբանության ուսուցման շրջանակներում, առաջադրանքների, կատարման ընթացքում ինտերակտիվ մեթոդների կիրառությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում միջին դպրոցի սովորողների շրջանում: Նրանց միջև ձևավորվում է առողջ մրցակցություն, իրար օգնելու, սովորեցնելու ցանկություն, որն էլ իր հերթին կարող է դրական ազդեցություն ունենալ վերջիններիս առաջադիմության վրա:

Հայոց լեզվի դասին շատ կարևոր է նոր նյութի հաղորդման ընթացքի ճիշտ կազմակերպումը: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: Նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են սովորողները նոր ներկայացված նյութը, ապա գտնել իրավիճակային լուծումներ: Կարող ենք ասել, որ միայն տեսական գիտելիքը որևէ հիմնաքարային ազդեցություն չի կարող ունենալ սովորողի իմացական կարողություններն ամրապնտելու առումով, քանի որ գործնական պարապունքների բացակայության պարագայում, սովորողի մոտ ուսուցանվող նյութը կունենա մեխանիկական բնույթ: Ուստի և ակտիվ ու աշակերտակենտրոն ուսուցման պարագայում ուսուցիչը կարող է այնպիսի մեթոդական հնարներ ընտրել, որ ամեն կերպ խրախուսի սովորողի ինքնուրույնությունը, տեսական գիտելիքի գործնական կիրառությունը:

Հայոց լեզվի դասավանդման գործնական նպատակն է, որ սովորողը կարողանա տեսական գիտելիքը կիրառել գործնականում, կազմի նախադասություններ, կարողանա կատարել բառերի ձևաբանական, բառակազմական և շարահյուսական վերլուծություններ: Այս նպատակներին հասնելու համար ուսուցիչը պետք է կարողանա մտածված ընտրի և ուսուցանի յուրաքանչյուր դասի բովանդակությունը, ճիշտ օգտագործի դասվանդման մեթոդներն ու օգտագործվող միջոցները: Դասի ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուսուցման տարբեր ձևեր և մեթոդներ՝ հանդես բերելով նոր մոտեցումներ,ավանդականի հետ նոր մեթոդների համակցում:

Նախագծային ուսուցման մեթոդի շրջանակներում ևս կարելի է գործնական աշխատանքն հանձնարարել սովորողներին, որի շրջանակներում նրանք կհետազոտեն, կպրպտեն, կկուտակեն անհրաժեշտ տեղեկատվություն: Ձննական մեթոդները, զրույցի մեթոդը նույնպեսն կարող են նպաստել սովորողների աշխատունակության բարձրացմանը: Ստացվեց, որ այս կերպ բոլոր սովորողները սկսեցին աշխատել, որևէ մեկը պասիվ դաշտում չմնաց, իսկ արդյունքնում զարգացան նրանց գործնական կարողությունները:

Իհարկե, նորարարական մոտեցումներնուսումնադաստիարակչական գործընթացում անչափ կարևոր են, սակայն նշենք նաև, որ չենք բացառում ավանդական մոտեցումների օգտագործումը՝ հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը, որոնք այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Այսպիսով, աներկբա է, որ ժամանակակից կրթության առանցքային հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող սերնդի ձևավորումը: Հենց այս կարողությունների ձևավորմամբ է պայմանավորված մարդկության առաջընթացը, որն այսօր աննախադեպ կերպով շոշափելի է դարձել:

1.2 Բայի ուսուցման արդյունավետ մեթոդներն ու տեխնոլոգիաները միջին դպրոցում

Ձևաբանության ուսուցման դպրոցական ծրագիրը բավականին ծավալուն է: Միջին դպրոցի 7-րդ դասարանիս սկսած՝ սովորողները հաջորդաբար ուսումնասիրում են խոսքի մասերը, այդ թվում՝ բայը, որն առանձնանում է իր քերականական հարուստ կարգերով ու խոնարհման ձևերով: Անչափ կարևոր է բայի դերը մտածողության, խոքի ձևավորման և հաղորդակցման գործում: Նպատակահարմար է բայի ուսուցումը սկսել նախորդ դասարաններում ստացած գիտելիքների վերհիշմամբ: Այս պարագայում կարելի է կիրառել «մտագրոհ» մեթոդական հնարը: Կարելի է խմբային աշխատանքի միջոցով վերհիշել բայի քերականական կարգերը՝ հանձնարարելով, որ յուրաքանչյուր խումբ առանձնացնի սահմանումներ և օրինակներ որևէ քերականական կարգի մասին, որին արդեն ծանոթ է: Այդ գիտելիքների ակտիվացումից հետո միայն ուսուցիչը կարող է մեծացնել գիտելիքների ծավալը: Ա. Բահաթրյանի կարծիքով բարձր դասարաններում ավանդվող քերականության դասընթացը տարրական դասարաններում դասավանդվող քերականությունից պետք է տարբերվի ոչ միայն իր նյութով, այլ նաև նպատակներով. «Քերականությունը միշտ և անհապաղ պիտի առաջ ածվի, հանգի լեզվից և ոչ երբեք քերականությունից,քանի որ բովանդակությունը ձևի հայրն է: Բացի դրանից, որտեղ հնարավոր է, լեզվի կանոնները չպիտի տրվեն երեխաներին, այլ նրանք ուսուցչի առաջնորդությամբ իրենք պիտի գտնեն այդ կանոնները…»[6]:

Հաջորդիվ ուսուցչի գերխնդիրն է սովորողներին ծանոթացնել բայի դրսևորման երկու ձևերին՝դիմավոր և անդեմ: Այս ընթացքում գերխնդիր է նաև արդյունավետ կերպով սովորողներին մատուցել բայի խոնարհման ամբողջ համակարգը՝եղանակներն իրենց ժամանակային ձևերով, ածանցավոր, անկանոն, պակասավոր բայերի խոնարհման առանձնահատկություններով:

Բայածանցների ուսուցման ժամանակ կարելի է աշխատանքն իրականացնել աղյուսակների միջոցով: Դրանք չորսն են: Սոսկածացներ «ան, են, ն, չ», պատճառական բայեր «ացն, եցն, ցն», բազմապատկական ածանցներ «ատ, ոտ, կոտ, տ», կրավորական ածանցներ «վ»: Կարելի է հանձնարարել նախադասություններից դուրս գրել բայերն ու գտնել դրանց կազմությունը: Խրախուսելի է խմբային աշխատանքը, որը թույլ կտա սովորողներին համագործակցել և օգնել իրար:

---

[6] Ա. Բահաթրյան, «Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», թիվ1-6/ Թիֆլիս, 1878:

Դիմավոր և անդեմ բայերի տարբերակման ժամանակ կարելի է կիրառել «Վեննի դիագրամ», որը թույլ կտա սովորողներին հստակ տեսնել տարբերությունները:



Դիմավոր և անդեմ ձևերի տարբերակման համար կարելի է սովորողներին առաջարկել նախադասություններ: Դրանց շուրջ հետազոտություններ կատարելով՝ սովորողները պետք է փորձեն կատարել ինքնուրույն եզրահանգումներ: Սովորողները, համեմատություն անցկացնելով դրանց միջև,կնշեն գործողությունն արտահայտելու ձևը, եղանակը:

1-ին օրինակ՝

Գետակի վրա թեքվել է ուռին Ու նայում է լուռ վազող ջրերին:

2-րդ օրինակ՝

Զորքի հետևում կանգնեցրել էին հարբեցրած փղերին:

3-րդ օրինակ՝

Միջօրեի արեգակի հրաշեկ գունդը հոգնած թեքվում էր դեպի արևմուտք:

Սովորողները կաշխատեն խմբերով: Նրանք կորոշեն և կընդգծեն ստորոգյալներն ու կառնեն երկսյուն աղյուսակի մեջ:

Թեքվել է	վազող
Կանգնեցրել էին	հարբած
Թեքվում էր	հոգնած

Ուսուցչի ուղղորդող հարցադրմամբ սովորողները կբացահայտեն, որ դրանք, գործողություն արտահայտելով հանդերձ, ցույց են տալիս, թե ո՞վ (ովքե՞ր) է կատարում այն (ուռին, գունդը, զորքը), կատարողը (կատարողները) քանի՞սն է, ե՞րբ է կատարվում, այսինքն՝ դեմք, թիվ, ժամանակ.հատկանիշներ, որոնք հատուկ են դիմավոր բայերին: Ուղղորդող հարցերին պատասխանելով՝ աշակերտները կգան այն եզրակացության, որ դիմավոր լինելու հանգամանքը պայմանավորվում է (կոնկրետ այս օրինակներում) օժանդակ բայի գոյությամբ: Միաժամանակ քննարկումների ճանապարհով կհանգեն այն կարծիքին, որ առանց օժանդակ բայի՝ թեքվել, նայում, կանգնեցրել, մրափում բայերը անդեմ ձևեր կլինեն: Պրոֆեսոր Ա.Աբրահամյանը, խոսելով դերբայների նշանակության ու դերի մասին, գրում է. «Հայերենի բայի խոնարհման համակարգի մասին, սակայն, ամբողջական պատկերացում չի կարելի կազմել առանց դերբայների: Դրա մասին են վկայում անալիտիկ կազմություն ունեցող դիմավոր ձևերը, ուր հիմնական դերը պատկանում է դերբայներին»[7]: Աշակերտների կատարած յուրաքանչյուր քայլին պետք է հաջորդի «ինչու՞», «ինչպե՞ս», «ուրեմն՝», «հետո՞ ինչ», «այսինքն՝» և նման այլ արտահայտություններ, որոնք նրանց կարող են մղել մտածելու, որոնելու, վերլուծածը տարբեր դատողությունների օգնությամբ համադրելու և եզրակացություններ անելու: Լեզվական այս իրողությունն ուսուցանելիս կարևորում ենք զննականության մեթոդը: Սովորողների դիտողական ունակությունները զարգացնելու, հիշողությունն ամրակայելու նպատակով կարելի է կազմել աղյուսակ, ուր երկու սյունակով կգրենք բոլոր դերբայներն ու դրանց վերջավորությունները: Ապա կհանձնարարենք, որ աղյուսակին համապատասխան սովորողները վերցնեն տարբեր բայեր և, ավելացնելով վերջավորությունը, կազմեն նոր դերբայներ ու անվանեն դրանք: Սովորողները կաշխատեն զույգերով:

Անկախ դերբայներ	Չնաբայեր
Անորոշ՝ *–ել, -ալ*	Անկատար՝ *–ում*
Ենթակայական՝ *–ող, -ացող*	Ապակատար՝ *–ու (-ելու, -ալու)*
Համակատար՝ *–իս (-ելիս, -ալիս)*	Վաղակատար՝ *–ել, -ացել*
Հարակատար՝ *–ած, -ացած*	Ժխտական՝ *–ի, -ա*

Բայի եղանակների ու ժամանակային ձևերի ուսուցման ժամանակ ևս հարկավոր է սովորողներին պահել դասի կենտրոնում: Ավանդական դասախոսություններն այդքան էլ արդյունավետ չեն նման բարդ թեմայի ուսուցման ժամանակ: Ուստի և սովորողները

[7] Ա. Աբրահամյան, «Հայերենի դերբայները և նրանց ձևական նշանակությունը», Երևան, 1953թ.:

պետք է ակտիվ աշխատեն զույգերով, խմբերով, օրինակներից գնան դեպի սահմանումնոր, տրված սահմանումների հիման վրա բերեն օրինակներ: Պետք է փորձել հնարավորինս բացառել գրատախտակից սովորողի մեխանիկական արտագրությունները: Պետք է սովորողներին թույլ տալխմբերով խոնարհել տրված բայերը, կազմել տարբեր եղանակների բայերի խոնարհման աղյուսակներ, համեմատել դրանք, գտնել նմանություններն ու տարբերությունները, կազմենլ կապակցված խոսք տարբեր եղանակներով դրված բայերով: Սովորողները պետք է կարողանան բացատրել ու առանձնացնել դրանց առանձնահատկությունները, տրված բայերով կազմել դարձվածքներ, գործածել դրանք բանավոր և գրավոր խոսքում:

Այսպիսով, կարծում ենք, որ աշակերտակենտրոն մոտեցումները քերականության ուսուցման ժամանակ շատ կարևոր են: Այս դասընթացն է, որ դրվում է սովորողների լեզվամտածողության զարգացման հենքում, նրանց գրագետ ու մաքուր խոսքային կարողության զարգացման ակունքում: Ուստի հարկավոր է մոտիվացնել ու խրախուսել սովորողներին, տալ նրանց պարտականություններ և խնդիրներ ու չմիջամտել՝ թույլ տալով, որ սովորողն ինքուրույն փնտրի ու գտնի այն, ինչն իրեն հարկավոր է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, սույն թեմայի ուսումնասիրության արդյունքում կատարեցինք մի շարք եզրահանգումներ, որոնք կներկայացնենք ստորև: Հայոց լեզվի դասաժամին ինտերակտիվ մեթոդների իրականացումը լուծում է մի շարք մանկավարժական խնդիրներ, դրանցից են՝

- Միջին դպրոցում հայոց լեզվի դասավանդման ընթացքում նորագույն տեխնոլոգիանրի, ինտերակտիվ մեթոդական հնարների կիրառումը նպաստում է սովորողների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Աշակերտակենտրոն դասերի իրականացումը, փոխգործուն աշխատանքը հայոց լեզվի դասին նպաստում է սովորողների կոլեկտիվ մտածողության զարգացմանը, սովորել սովորեցնելով կարողունակության ձևավորմանը:
- Գործնական աշխատանքի իրականացումը հայոց լեզվի դասավանդման ընթացքում սովորողների համար հնարավորություն է ստեղծում տեսական գիտելիքները համադրել գործնական կարողությունների հետ: Գործնական աշխատանքների ժամանակ սովորողը սովորում է հետազոտել, վերլուծել, փնտրել, համակարգել տեղեկատվությունը, եզրահանգումներ կատարել:
- Ինքնուրույնությունը, որը սովորողը ստանում է գործնական աշխատանքի ժամանակ, նպաստում է վերջինիս աշխատունակության ու մոտիվացիայի բարձրացմանը:
- Դասին սովորողների դերի ակտիվության ապահովումը զարգացնում է քննադատական մտածողություն ու դատողություններ կատարելու կարողություն:
- Միջին դպրոցում բայի ուսուցման ժամանակ զննական մեթոդի կիրառությունը թույլ է տալիս, որ սովորողն ավելի խորքային ընկալի դասանյութը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://armedin.am/wp-content/uploads/2019/09 «Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ»:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf «Հայոց լեզու» ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար:
4. Ա. Բահաթրյան, «Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», թիվ1-6/ Թիֆլիս, 1878:
5. Ա. Աբրահամյան, «Հայերենի դերբայները և նրանց ձևական նշանակությունը», Երևան, 1953: